

մը որ վիշապին կուտայ մահացու հարուածը կոկորդէն», ինչպէս կ'ըսեն նկարիչները: Օմարի մզկիթին գաւիթին մէջ կը գտնուի լայնկեկ քար մը, ուր, կ'ըսեն իսլամները, թէ Ս. Գէորգ ամէն գիշեր աղօթելու կուգայ դէմքը դէպի արևելք: Հետաքրքրական է որ մշակեացն Ս. Գէորգ՝ ըստ իսլամներու հաւատալիքին, ընկերն է Եղիայի որ հրեղէն կառքով երկինք համբարձաւ և մահ չունեցաւ, ինչպէս ամէն ոք գիտէ:

Անգղիացիները Երուսաղէմի մէջ ունին Ս. Գէորգ անուանով մայր եկեղեցի մը, ուր ամէն տարի Ապրիլ 23 ին Ս. Գէորգի օրուան համար աղօթքի հաւաքովթ մը կը կատարեն (P. E. F. 1918, էջ 25-34):

Աղլիդի Ս. Յովհաննու Մկրտչի մատուռը. — Աղլիդ՝ Հայֆայի և Յոպպէի միջև փոքր գիւղ մըն է: 1187 ին Ս. Յովհաննու Մկրտչի անուանով մատուռ մը գոյութիւն ունէր վանականներու այրերուն մօտ, որոնք Castel Pelegrino ի, այժմու Աղլիդի հանդիպակաց կողմն էին: Մինչև հիմակ այդ այրերը նոյն բերդին արևելքը ցոյց կը տրուին, և անոնց մօտ կայ սրբավայրը Այեսա մարգարէին որ Ս. Յովհաննու Մկրտչի տեղական անունն է (Tent work in Palesine, Բ. հատոր, էջ 223, Conder):

Յոպպի աւանդութիւնները. — Յոպպէն Պաղեստինի նաւահանգիստն է: Ճանապարհորդը որ կը մօտենայ անոր՝ կը հիանայ քաղաքին գեղեցկութեանը վրայ. անոր հին տուները առատօրէն բուսականութեամբ մը ընդելուզուած բարձր բլուրի մը կողերուն վրայ խառն ի խուռն կը տարածեն իրենց տանիքները: Քրիստոնէական ուխտաւորը բարձրագոյն զգացումներով լեց-